ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(առարկա)

ԹԵՄԱ Թեմա՝ Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառումը

Ռաֆֆու «Խենթը» վեպի ուսուցման ժամանակ

Կազմեց՝ Գալստյան Հասմիկ Վ. (անուն, ազգանուն, հայրանուն)
Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոց
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝Լուսինե Գրիգորյան

<<Կապանի N2 ավագդպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստողկազմակերպությանանվանումը)

Կապան 2023թ

Բովանդակություն

Ներածություն_____3
Մաս 1_____5
Մաս 2_____9
Եզրակացություն_____18
Գրականություն ցանկ_____

Ներածություն

Լսում եմ՝ մոռանում եմ,
Տեսնում եմ՝ հիշում եմ,
Կատարում եմ՝ հասկանում եմ...

Հայոց լեզու և գրականություն առարկաները, առավել ևս այսօր, չպետք է ուսուցանել իրականությունից՝ կյանքից կտրված: «Գրականությունը հայելի է, որը ոչ միայն ցույց է տալիս ճակատին քսված մուրը, այլ այդ մուրը սրբելու ուղիներն ու հնարները»: Այսօր օրվա հրամայականն է դարձել մայրենին ու գրականությունը մի նոր մակարդակի հասցնել հայեցի կրթությունն ու դաստիարակությունը հայի գոյության ու լինելիության հիմնաքարերն են:

Այսօր երկիր մոլորակն իր աշխարհաքաղաքական նոր զարգացումներով ու վերադասավորումներով ավելի է սրում ազգային արժեքների պահպանման ու ամրապնդման կարևորությունը, իսկ հայրենիքի առջև ծառացած մարտահրավերները պահանջում են ռազմահայրենասիրական դաստիարակությունը հասցնել մի նոր աստիճանի՝ խորացնելով ու զարգացնելով միջառարկայական կապերի օգտագործումը, ինտեգրված դասերի կազմակերպումը ուսումնական պրոցեսի ողջ ընթացքում: Արագ փոփոխվող ժամանակակից աշխարհում կյանքին համահունչ ու համընթաց քայլող անհատ կերտելու համար պահանջվում է անընդհատ վերանայել, փոփոխել ու թարմացնել ուսումնադաստիարակչական ողջ համակարգը:

Այս առումով համագործակցային ուսուցման մեթոդների կիրառումը լայն հնարավորություն է ընձեռում թե ուսուցչին, թե աշակերտին՝ ապահովելով ուսուցչակենտրոն դասապրոցեսից անցումը աշակերտակենտրոնի:

Կրթությունն ու դաստիարակությունը պետք է լինեն ճկուն, դինամիկ՝ ներառելով համաշխարհային ու եվրոպական փորձն ու հմտությունները՝ պահպանելով սեփական՝ ազգային առանձնահատկություններն ու արժեքները:

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության թեման է «Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառումը Ռաֆֆու «Խենթը» վեպի ուսուցման ժամանակ»:

Աշխատանքում ուսումնասիրել ենք համագործակցային ուսուցման մեթոդները, տեսակները, դրանց կիրառության կարևորությունն ու անհրաժեշտությունն ուսումնառության ժամանակ: Դրանց ճիշտ ու գրագետ կիրառումը կհանգեցնի ուսումնառության գործընթացում գիտելիքի որակի բարձրացմանը և համապատասխան

հմտությունների յուրացմանը: Մեր կարծիքով նոր նյութը լավ հասկանալու և յուրացնելու համար առավել արդյունավետ է ուսումնառության պրոցեսի տարբեր փուլերում դիմել համագործակցային ուսուցման տարբեր մեթոդների օգնությանը:

Մաս 1

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Երբեմն համագործակցային ուսուցումը անվանում են «Փոքր խմբային ուսուցում»: Այն ուսումնական ռազմավարություն է, որում աշակերտների փոքր խմբերը աշխատում են միասին մի ընդհանուր հանձնարարության վրա: Հանձնարարությունը կարող է լինել հեշտ, պարզից բարդ անցումով: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների[1] հինգն են՝ 1. Դրական փոխկախվածություն (positive interdependence) – աշակերտները պատասխանատու են լինում իրենց և խմբի աշխատանքի համար:

2. Դեմ առ դեմ փոխազդեցություն (face-to-face interaction) – աշակերտները ոգևորում և աջակցում են իրար, շփվում են ուսուցման գործընթացում:

3. Անհատական և խմբային հաշվետվողականություն (պատասխանատվություն) – յուրաքանչյուր աշակերտ պատասխանատու է իր մասի համար, իսկ խումբը՝ ընդհանուր աշխատանքի համար:

4. Միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ – խմբային անդամները ստանում են հանձնարարություն միջանձնային,սոցիալական և համագործակցային հմտությունների նպատակով, որը անհրաժեշտություն է առաջացնում միասին աշխատելու:

5. Խմբային գործընթացի մշակում- խմբի անդամները վեր են լուծում իրենց աշխատանքը թիմային աշխատանքի հետ միասին, ինչպես նաև թիմում յուրաքանչյուր աշակերտի համագործակցումը:

[1] Johnson, D., Johnson, R. (1999). Learning together and alone: cooperative, competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon

Համագործակցային ուսուցումը փոխում է աշակերտի և ուսուցչի դերը դասարանում: Դասավանդման և ուսուցման ղեկավարումը բաժանվում է աշակերտների խմբերի կողմից (միջև): Աշակերտները ավելի շատ հնարավորություն են ստանում սովորելու, հարցնելու, միմյանց հետ կիսվելու, ինչպես նաև քննարկելու իրենց գաղափարները: Համագործակցային ուսուցումն օգնում է աշակերտներին ներգրավելու բանավեճի և քննարկել տարբեր հեռանկարներ:

Համագործակցային ուսուցման վարժությունները կարող են լինել 5 րոպեանոց կամ էլ մի ամբողջ դասաժամ: Լավ նախագծված պլանավորած և իրագործվող համագործակցային ուսուցումը ներառում է հետևյալ էական քայլերը.

Նախաուսումնական պլանավորում – օգնում է հաստատել համագործակցային ուսուցման տեխնիկա և հիմք է հանդիսանում արդյունավետ խմբային աշխատանքների: Աշակերտներին ներկայացնել գործընթացը – Աշակերտները պետք է ստանան հրահանգներ: Պետք է բացատրել ակադեմիական հանձնարարությունը և թե ինչ չափանիշներ են պետք հաջողության համար: Հստակեցնել ժամանակահատվածը և թողնել, որ պարզեն հարցադրումներով:

Ստուգումը և միջամտումը – սրա ընթացքում խումբը աշխատում է, իսկ ուսուցիչը շրջում է դասարանում՝ ուսումնասիրելով աշխատանքը, ստուգելով՝ հասկացել են հանձնարարությունը, թե ոչ:Եթե խումբը ունի որևէ խնդիր, ուսուցիչը կարող է միջամտել և օգնել:

Գնահատումը – արվում է թե՛ հրահանգչին, թե՛ խմբին:

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացված են համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ

միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները։ Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին։

Խճանկար (Ջիգսո, Jigsaw)։ Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է։ Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից։ Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում։

Շրջագայություն պատկերասրահում։ Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ։

Երեք բանալի և մեկ կողպեք։ Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով։ Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան։ Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն։

Հինգրոպեանոց ազատ շարադրանք։ Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից։ Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք։

Մաս 2

Ռաֆֆու «Խենթը»-ի ուսուցումը

«Անմահ հոգի, որ քո տաղանդի կախարդական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական դեմքեր և նրանցով վառեցիր, ոգևորեցիր վիհատներին, որ տկարներին համարձակություն ներշնչեցիր ու ղրկեցիր հզորների դեմ նահատակության արյունով լվանալու և սրբելու ստրկության արտասուքը, որ անհանգստություն տվիր հայ ժողովրդի հոգուն և ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը...»:

Հովհաննես Թումանյան

- Հայրենաճանաչությունից է սկսվում հայրենասիրությունը
- «Խենթը»-ի երազի խորհուրդը
- Թեմայի արդիականությունը. պատմությունից դասեր քաղելու և ճիշտ վերլուծություններ անելու կարևորությունը և կարողությունների զարգացումը

Ուսուցիչը «կարճ դասախոսության» միջոցով տեղեկություններ է հաղորդում վեպի գրության շարժառիթի, պատմական իրադարձության (ժամանակաշրջանի), գլխավոր հերոսի նախատիպ Վարդանի հետ հեղինակի ունեցած հանդիպման մասին:

1877-1878 թթ ռուս-թուրքական պատերազմը նոր ընթացք հաղորդեց հայոց ազգային-ազատագրական շարժմանը: Ոգևորությունն համընդհանուր էր: Հայ ժողովուրդը հավատում էր, թե ռուսական զենքի հաղթանակով Արևմտյան Հայաստանը կազատագրվի թուրքական բռնատիրությունից: Սակայն Ռաֆֆին համոզված էր, որ ազատությունը չի շնորհվում վերուստ, և յուրաքանչյուր ժողովուրդ այն կարող է նվաճել միայն սեփական ուժերով: «Երբ մարդ անընդունակ է անձնապահպանության, նա կյանքի իրավունք չունի»:[2]

Ո՞րն է ելքը և ի՞նչ անել:

Ազգային որոշ գործիչներ հայկական հարցի լուծումը հնարավոր են համարում ապագա «քաղաքակրթված Թուրքիայում»: «Մենք ունենք 850 տարվա պատմություն, -

2 http://www.hayzinvor.am/13012.html

ասում է Ռաֆֆին, -թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը. . . Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա»:[3]

«1877 թվականի սեպտեմբերին Թիֆլիսից Երևան ճանապարհվելիս Ռաֆֆին Դիլիջանում հանդիպել է Բայազետի պաշտպանությանը մասնակցած վիրավոր զինվորների, որոնք էլ պատմել են, որ իրենք փրկվել են մի զինվորի հնարամտության շնորհիվ: Նա խենթ քուրդ ձևանալով՝ ճեղքել է այդ տարածաշրջանում գտնվող թուրքերի ու քրդերի զինված շրջափակումը, լուր հասցրել գեներալ Արշակ Տեր-Ղուկասովին, որի օգնությամբ էլ ազատագրվել են Բայազետի պաշարված բերդում գտնվող հայ և ռուս զինվորները: Ռաֆֆին այս նյութը դարձնում է արդեն ծրագրված վեպի թեմա, որը հայությանը պետք է մղեր ազգային ազատագրական պայքարի: Դեպքերի մանրամասներին ծանոթանալու համար գրողն անձամբ հանդիպում է այդ քաջ զինվորի՝ Սամսոն Տեր-Պողոսյանի հետ, որն էլ այդ հանդիպման մասին գրում է. «Ես ինչ-որ հանձնարարականով Էջմիածին էի եկել, երբ կապույտ ակնոցով, մեծ, սև բեղերով ինչ-որ մարդ առաջս կտրեց, ծանոթացավ, անվանելով իրեն Մելիք-Հակոբյան, և ասելով, որ ինձ հետ կարևոր խոսակցություն ունի, տարավ միաբաններից մեկի խուցը և ահա այստեղ սկսեց ինձ հարցուփորձի ենթարկել իմ մի տարի առաջ Բայազետում և գեներալ Տեր-Ղուկասովի բանակում արածների մասին: Ես ամեն կերպ աշխատում էի կարճ կապել, բայց այս մարդը յախիցս բռնել, պոկ չէր գալիս, հարցեր էր, որ տալիս էր և ասածներս գրում էր ծոցատետրում: Այդ պահին ներս եկավ բժիշկ Բագրատ Նավասարդյանը, որ գաղթականներին բուժող ու խնամող վանքի բժիշկն էր, և կամացուկ ասաց ականջիս՝ սա մեր հայտնի գրող Ռաֆֆին է, մանրամասն պատմիր, նա

[3] http://www.hayzinvor.am/13012.html

կարծես, ինչ-որ բան է ուզում գրել այդ պատերազմի մասին: Եվ ես սկսեցի պատմել ու պատասխանել նրա տված հարցերին, որից հետո դուրս եկա ու գնացի իմ գործին»[4] :

Սամսոնը դարձավ «Խենթ» վեպի գլխավոր հերոսի՝ Վարդանի նախատիպը: Վեպն առաջին անգամ լույս տեսավ 1881 թվականին Շուշիում: Այնուհետև հրատարակվեց ու վերահրատարակվեց բազմաթիվ այլ լեզուներով: Այս ստեղծագործությամբ Րաֆֆին ցանկանում էր ժողովրդի մեջ արթնացնել ազգային ինքնագիտակցությունը, ազգի ճակատագիրը սեփական ուժերով տնօրինելու և զենքի ուժով հայրենիքն ազատագրելու գաղափարը: Կարելի է ասել, որ վեպն իր առջև դրված խնդիրը կատարեց: Ժամանակին այն մեծ արձագանք է ստանում ընթերցողների շրջանում, հայրենասիրության ալիք բարձրացնում: Լեոն այդ առիթով գրում է. «19-րդ դարի կեսերին կար հասարակության ավելի ընդարձակ տրամադրություն, որ ասում էր, թե ձրի ոչինչ չէ տրվում մարդուն, թե ազատությունը չէ շնորհվում իբրև ողորմություն, այլ նվաճվում է իբրև իրավունք: …Այս ընդհանուր հոսանքին հարկավոր է ղեկավարող խոսք, հարկավոր է ծրագիր»[5]: Ժամանակի այս մեծ պահանջի իրականացումն էլ վիճակվում է Րաֆֆու տաղանդին»[6]:

Ուսուցիչը հանձնարարում է «Մտագրոհ»:
Գրատախտակի կենտրոնում գրել խենթ բառը և լրացնել, առանձին սյունակներով գրել խենթ բառի հոմանիշները և հականիշները:

Լրացնել աղյուսակը.

Ստեղծագործությունը	Հեղինակը	Գլխավոր հերոսը	«Խենթությունը»
«Խենթը»	Րաֆֆի	Վարդան	Պաշարված բերդից կարողացավ դուրս գալ և նամակը հանձնել յուրայիններին

[4] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1984, էջ 445-446:
[5] Լեո, Երկերի ժողովածու հ. 9, Ե., 1966, էջ 334-335
[6] http://www.irates.am/hy/1431674346 (Հովհաննիսյան Մ. Դոցենտ, ԵՊՀ, Սամսոն Տեր-Պողոսյանի եղբոր ծոռնուհին)

«Սասնա ծռեր»	Ժողովուրդ	Սասունցի Դավիթ	Մեն-մենակ գնաց Մսրա Մելիքի և նրա զորքի դեմ
«Ամբոխները խելագարված»	Չարենց	Ամբոխ (ժողովուրդ)	Եթե ուզեն կամքով արի ու աշխարհի հրով արի Ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարված:

Կարդալ վեպի սկզբում ներկայացված առածները և մեկնաբանել:

Խենթը մի քար գլորեց փոսը, հարյուր խելոքներ հավաքվեցան, չկարողացան դուրս հանել:

Մինչև խելացին կմտածե, խենթը գետից անց կկենա:

Խենթից — ուղիղ պատասխան:

Ազգ. առածներ

Աշակերտներին հանձնարարել ավելացնել նույն բովանդակությունն ունեցող 2-3 առածներ:

Տեքստի ուսումնասիրությունը կազմակերպելու համար ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի(5):

Տեքստի շուրջ տարվող աշխատանքի քայլերը ուսուցիչը գրում է գրատախտակին՝ տեքստը նախապես բաժանելով 5 մասի:

- Տեքստի ընթերցում
- Հենակետային (բանալի բառերի) որոշում
- Բաժանում տրամաբանական մասերի
- Ողջ տեքստի գաղափարի որոշում
- Դատողությունների և եզրահանգումների շարադրում

Խմբերից յուրաքանչյուրին տրվում է ընդհանուր և հատվածից բխող առաջադրանքներ։

- Դասագրքի հատվածը բաժանվում է 5 մասի։ Յուրաքանչյուր խումբ կարդում և վերհիշում է իրեն հանձնարարված հատվածի բովանդակությունը։
- Օգտագործել «3 բանալի 1 կողպեք» մեթոդը, հանձնարարել յուրաքանչյուր խմբին հատվածից դուրս գրել հենակետային (բանալի) նախադասությունները։
- Հատվածից դուրս գրել հատուկ անունները և տեղանունները;
- Ներկայացնել հատվածի հերոսներին։(Նպատակ՝ սովորողների ճանաչողական զարգացում)։

Հայրենաճանաչությունը ամբողջական դարձնելու նպատակով ցուցադրել սահիկաշար նվիրված Ալաշկերտին և Բայազետին։

Ալաշկերտ, քաղաք Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառի Ալաշկերտի գավառակում (այժմ՝ Թուրքիայի Կարաքյոսեի վիլայեթում), Ալաշկերտի դաշտի հյուսիսային ծայրաշրջանում, Սուկավետ լեռնագագաթի ստորոտին, Արածանիի աջակողմյան վտակ Շառիան գետի վտակներից մեկի հովտում։ Ծովի մակերևույթից բարձրությունն ավելի քան 1700 մ է։ Կլիման զով է, նման Շիրակի դաշտի կլիմային։ Պատմական Այրարատ նահանգի Բագրևանդ գավառի կենտրոնը։ Տարբեր ժամանակներում հիշատակվում է իբրև ավան, գյուղաքաղաք, բերդաքաղաք, քաղաք։[7]

Բայազետ կամ Արշակավան, քաղաք Արևմտյան Հայաստանում, Արարատի նահանգում։ Գտնվում էր Մասիսից հարավ-արևմուտք, Ծաղկանց լեռների Թոնդրակ լեռան հյուսիսային լանջերին։

100 տարվա ընթացքում Բայազետը 4 անգամ (1828, 1854, 1878, 1914) գրավվել է ռուսական զորքերի կողմից և վերադարձվել թուրքերին[8]։

«Խենթը»-ի երազի խորհուրդը

Ուսուցիչը «կարճ դասախոսության» միջոցով տեղեկություններ է հաղորդում Ռաֆֆու ռոմանտիզմի մասին։

Լինելով ռոմանտիզմի խոշորագույն ներկայացուցիչ, մեծ հայրենասեր ու տաղանդավոր գրող՝ մեծ վիպասանը հավատում էր իր ժողովրդի ու իր հայրենիքի

[7] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%AC%D5%A1%D5%B7%D5%AF%D5%A5%D6%80%D5%BF
[8] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%A1%D5%B5%D5%A1%D5%A6%D5%A5%D5%BF

պայծառ ապագային։ Վերցնելով ժողովրդից և կերտելով նվիրյալ զավակների՝ հերոսների կերպարներ, ամենածանր ու անելանելի պահերին անգամ հույս ու հավատ էր ներշնչում, որ գալու է այդ երազած օրը, որ հայն ու Հայաստանը ապրելու են ազատ ու անկախ։

Ապրելով անհույս ու գորշ իրականության մեջ՝ կերտում է իր ժողովրդի երազանքի Հայաստանը Խենթի՝ Վարդանի երազում՝ հերոսի ամենատխուր տառապանքի պահին։ Հեղինակն իր երազանքներն ու գաղափարներն արտահայտել է հերոսի և նրա տեսած երազի միջոցով։

Ուսուցիչը համառոտ ներկայացնում է, թե ինչպես Վարդանը, հրաժարվելով գեներալի շահավետ առաջարկից, մեկնում է որոնելու և փրկելու իր սիրած աղջկան։ Սակայն Վարդանը երկար թափառումներից հետո գտնում է միայն սիրած աղջկա գերեզմանը։ Երկար դառնալի ողբում է Վարդանը, թրջում շիրիմն իր արցունքներով, մինչև որ մի թմբիր է պատում նրան, և նա երազ է տեսնում։

Այսուհետև ուսուցիչը առաջարկում է աշակերտների խմբերին ուսումնասիրել հատվածը, որտեղ նկարագրվում է երազը.

Ուսուցիչը յուրաքանչյուր խմբին տալիս է առանձին հանձնարարություն։

- Համառոտ վերապատմել ամբողջ հատվածը։
- Առանձնացնել երկու կարևոր պահ հատվածից և ձևակերպել մեկ ցանկություն (2 աստղիկ, 1 դրոշակ)։
- Ձևակերպել հարցեր՝ ուղղված վեպի հեղինակին, այնպես կարծես նա դասարանում լինի (դերախաղ)։Այդ հարցերին կփորձեն պատասխանել մյուս խմբերի սովորողները և ուսուցիչը, բայց խումբը նույնպես կմտածի այդ հարցերին պատասխանելու շուրջ։
- Նկարել Ռաֆֆու երազած և նկարագրած Հայաստանը՝ գյուղը, եկեղեցին, դպրոցը, ընտանիքը և այն իրականը, ուր ապրում էին հեղինակն ու հերոսները։

Վենի դիագրամով կամ համեմատության աղյուսակով ներկայացնել Հայաստանը՝ երազում պատկերված, հեղինակի և հերոսների ապրած Հայաստանը և այսօրվա Հայաստանը։

Տնային առաջադրանքը կատարելու համար աշակերտները պետք է օգտվեն լրացուցիչ աղբյուրներից՝ գրականություն, համացանց, ինչպես նաև դիմեն ընտանիքի անդամների աջակցությանը։

Թեմայի արդիականությունը, պատմությունից դասեր քաղելու և ճիշտ վերլուծություններ անելու կարևորությունը և կարողությունների զարգացումը

Պատերազմը չարիք է մարդկանց և ազգերի համար։
Ազատության ծառը ժամանակ առ ժամանակ պետք է ջրվի հայրենասերների արյամբ։
(Թ. Ջեֆերսոն)

Ուսուցիչը հանձնարարում է հինգրոպեանոց ազատ շարադրանք։
Ապա աշակերտները ընթերցում են իրենց շարադրանքները, կազմակերպվում է ինտերակտիվ քննարկում, գալիս են ընդհանուր եզրահանգման և լրացնում վերջնական «Քառաբաժան»-ը։ Ուսուցիչը կատարում է լսողի, ուղղորդողի, հուշողի իր դերը և հետևում «Քառաբաժան»-ին։

Հետաքրքիր քննարկման կամ բանավեճի թեմա կարելի է դարձնել Թովմաս Էֆենդու խոսքերը. «Ձեր տեսած առաջվա Թոմաս էֆենդին իր դարու հարազատ զավակն էր, բայց ժամանակները փոխեցին նրան։Այժմ նա ներկա սերնդի լավ ներկայացուցիչներից մեկն է։ Բայց ներկա սերունդը մեծ հառաջադիմություն է գործել»։

Դուք հավտու՞մ եք արդյոք ոգեփոխությանը։

Ի՞նչն էր դրդել նրան ոգեփոխության։

Կարելի է հանձնարարել նաև հինգրոպեանոց ազատ շարադրանք և ունկնդրել բոլորին, որից հետո միայն անցնել քննարկման, բանավեճի։

Եզրակացություն

«Խենթը»-ի ուսուցումը հնարավորություն է տալիս լավագույնս օգտագործել միջառարկայական կապերը (հայոց պատմություն, աշխարհագրություն, եկեղեցու պատմություն և գրականություն) և ինտեգրված դասի լավագույն օրինակ ունենալ։ Նախապես կարելի է համագործակցել վերոհիշյալ առարկաների ուսուցիրների հետ,

մշակել, պլանավորել անելիքը և որպես թեմայի ամփոփում (վերջին դաս) կազմակերպել էքսկուրսիա դեպի Սուրբ Էջմիածին՝ Սուրբ Գայանեի վանք, ուր հավերժական հանգիստ է գտել «Խենթը»-ի Վարդանը՝ Սամսոն Տեր-Պողոսյանը։

Խենթի գերեզմանը միշտ էլ յուրահատուկ ուխտատեղի է եղել ազատասեր ու ազատատենչ բոլոր սերունդների համար։ Աշակերտներն ու ուսուցիչները ծաղիկներ են խոնարհել ու կխոնարհեն ոչ միայն Խենթի, այլև անբախտ Լալայի շիրիմին և կերդվեն իրականություն դարձնել Խենթի երազը։ Ցավոք, թեման արդիական է ոչ միայն սոցիալ-տնտեսական տեսանկյունից, այլև դեռևս վերացված չէ մեր ազատությանն ու անկախությանը սպառնացող վտանգը. . .

. . . Իսկ վտանգի ահեղ ժամին

Երբ սպառնում է թշնամին,

Դու ավելի ես քաղցրանում,

Հայրենի՛ք։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լեռ, Երկերի ժողովածու հ. 9, Ե., 1966, էջ 334-335
2. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1984, էջ 445-446:
3. http://www.irates.am/hy/1431674346
4. http://www.hayzinvor.am/13012.html
5. http://www.irates.am/hy/1431674346%20
6. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%AC%D5%A1%D5%B7%D5%AF%D5%A5%D6%80%D5%BF
7. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%A1%D5%B5%D5%A1%D5%A6%D5%A5%D5%BF
8. Johnson, D., Johnson, R. (1999). Learning together and alone: cooperative, competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon:

Ուսուցիչ՝ Հ.Գալստյան
Դասարան՝ 10-րդ
Դասի թեման՝ *Շիրվանզադեի կյանքը և ստեղծագործությունը*
Դասի նպատակը՝

- ծանոթացնել Շիրվանզադեի կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրին
- բացատրել թեմատիկ և ժանրային առանձնահատկությունները
- գաղափար տալ ռեալիզմի մասին

Դասի վերջնարդյունքները՝ կարողանա՝

- ունենալ որոշակի պատկերացում գրողի կենսագրության և ստեղծագործության մասին
- ՀՊՉ 1) գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին
- ՀՊՉ 24) անկողմնակալ և առանց նախապաշարմունքների վերաբերվի ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծի հասանելի տեղեկույթը, ճանաչի, կառուցի և գնահատի փաստարկները.
- ճանաչել (նկարագրել) թեմատիկ և Ժանրային առանձնահատկությունները
- ՀՊՉ 7) քննարկի, հայտնի դիրքորոշում և կատարի գիտակցված ընտրություն աշխարհաճանաչողության ձևերի վերաբերյալ.
- ընդհանուր գծերով ներկայացնել ռեալիզմի հատկանիշները:
- ՀՊՉ 11) առաջադրի հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորի և իրականացնի հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ և բարելավման եղանակներ: Վերլուծի ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարի վերացարկումներ և ընդհանրացումներ.

- ՀՊՉ 25) ուսումնասիրի և ընդլայնի սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ.

Դասի խնդիրները՝

- վերհանել կենսագրական տվյալները՝ բացահայտելով ժամանակաշրջանը և գրողի գրական դիմանկարը

Ժամանակ և տարածություն

- կատարել թեմատիկ և ժանրային դասակարգում առաջարկված ստեղծագործությունների շուրջ

Օրինաչափություն

Կառուցվածք և գործառույթ

- բնութագրել Շիրվանզադեին որպես ռեալիզմի հիմնադիր (տրված հատկանիշներից տարբերակել ռեալիզմին բնորոշները)

Անհատական և մշակութային արժեհամակարգ

Դասի թեման՝ *Մարկոս աղա Ալիմյանի կերպարը*

Դասի նպատակը՝

- բացահայտել Մարկոս աղա Ալիմյանի կերպարի էությունը, նրա անձի շուրջ հյուսված լեգենդները
- ներկայացնել կտակի դերը վիպական գործողությունների զարգացման մեջ

Դասի վերջնարդյունքները՝ կարողանա՝

- ստեղծել հայ բուրժուազիայի առաջին ներկայացուցիչի կերպարը հանձին Մարկոս աղա Ալիմյանի
- ՀՊՉ 24) անկողմնակալ և առանց նախապաշարմունքների վերաբերվի

ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծի հասանելի տեղեկույթը, ճանաչի, կառուցի և գնահատի փաստարկները.

- վերհանել Մարկոս աղա Ալիմյանի գործողությունների պատճառը և արժեքային համակարգը
- ՀՊՉ 38) ճանաչի իր դերը և պատասխանատվությունը ընտանիքում, խմբում և հասարակության մեջ.
- արտահայտել սեփական դատողությունները կերպարի վերաբերյալ
- ՀՊՉ 7) քննարկի, հայտնի դիրքորոշում և կատարի գիտակցված ընտրություն աշխարհաճանաչողության ձևերի վերաբերյալ.
- մեկնաբանել, թե ինչպես է Մարկոս աղա Ալիմյանը (կտակի միջոցով) հետագա վիպական գործողություններին ընթացք տալիս
- ՀՊՉ 11) առաջադրի հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորի և իրականացնի հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ և բարելավման եղանակներ: Վերլուծի ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարի վերացարկումներ և ընդհանրացումներ.

Դասի խնդիրները՝

- բնագրից դուրս գրել Մարկոս աղա Ալիմյանին բնութագրող հատվածները, միֆեր և իրականություն (բուրժուական հասարակության հարազատ զավակ, ավանդապահ, դժբախտ կամ ձախողված հայր, հաջողակ գործարար)

Անհատական և մշակութային արժեհամակարգ

- բացատրել կտակի ներգործությունը հերոսների ճակատագրի վրա

Պատճառ և հետևանք

- Մարկոս աղա Ալիմյանի և Սմբատի կերպարների միջոցով նշել հայ բուրժուազիայի առաջին և երկրորդ սերնդի տարբերությունները

Ժամանակ և տարածություն

Կայունություն և փոփոխություն